

ԵՐԱԺՇՏԱԽՈՍՔԱՅԻՆ ՏԵՔՍ, ԿԵՆՍԸՆԹԱՑ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(ԸՍՏ ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՅՆԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒԻ)

Պիկիչյան Հ. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ԵՊՀ, Հայաստան)
hripsime-pikichian@rambler.ru

Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, ավանդական երաժշտություն, ձայնադարան, պատմամշակութային տեքստ:

Ժողովրդական մշակույթը մի համապարփակ տեքստ է, որ պատմում է արարող ժողովրդի բնական ու մշակութային միջավայրի և անցած ճանապարհի մասին: Իսկ եթե այն նաև պարփակված չէ արարչության հուճք դարձած նյութի շրջանակներում, ապա անսահման հնարավորություններ է ստանում՝ արտացոլելու նրա աշխարհայացքը, ապագայի տեսլականն ու այն իրականացնելուն միտված գործընթացները՝ ժամանակի ու տարածության ողջ հոլովույթում: Ի շարս մշակութային ժառանգության այլ ճյուղերի՝ հիշյալ առաքելության կրողն է նաև բանավոր ավանդույթի հայ երաժշտական մշակույթը, որի շուրջ 15.000 ձայնագրյալ նմուշ (1927-2012 թթ.) պահվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում: Այս հարուստ հավաքածուն, իրավամբ, կարելի է հայ ժողովրդի կյանքի երաժշտական վավերագրերի յուրօրինակ գանձարան համարել: Հայաստանի մարզերում և ԽՍՀՄ-ի հայաշատ բնակավայրերում գիտարշավների ընթացքում ձայնագրյալ նյութերի այս հավաքածուի շնորհիվ կարելի է հստակ պատկերացում կազմել ավանդական երաժշտական մշակույթի զարգացման ողջ ընթացքի մասին՝ ընդգրկելով պատմական Հայաստանի գրեթե բոլոր գավառները, Հայաստանի և Արցախի Հանրապետությունները:

Թեմայի ընտրությունը պատահական չէ, քանզի մշակույթի յուրացման ակտիվ քաղաքականության համատեքստում մեր հարևանները չեն անտեսել նաև հայոց երաժշտական ժառանգությունը: Ներկայացվող գեկուցումը միտված չէ անդրադառնալու առանձին ժանրերի կամ ստեղծագործությունների բնիկ ծագման կամ պատկանելության խնդրին, այլ փորձ է՝ իբրև *հավաքական ամբողջություն* ներկայացնել և գիտականորեն արժևորել նշված ձայնագրյալ հավաքածուն՝ որպես *մեկ հեղինակի*՝ հայ մարդու կենսընթացի պատմամշակութային տեքստ:

Իբրև ամբողջական համակարգ՝ թեմատիկ առումով հավաքածուն արտացոլում է հնագույն շրջաններից ցայսօր հայոց կենսաապահովման միջոցները, արհեստները, նախաքրիստոնեական և քրիստոնեական հավատալիքներն ու կրոնը, հոգևոր և աշխարհիկ տոները, ծեսերը, արարողությունները, հանրային և ընտանեկան կյանքը, առասպելական ու պատմական նախնիներին, հերոսներին, ճակատագրական անցքերը: Երաժշտագիտական առումով այն երգային ու նվագարանային բոլոր ժանրերի, ավանդական նվագարանների տեսականու, մեղեդիների և բանաստեղծական կառույցների, կատարման ոճերի, հանպատրաստից ստեղծվող և կանոնացված ժանրերի, երաժշտական բարբառների երաժշտախոսքային բնօրինակ-քարտեզ է, որ համեմատելի է պատմական Հայաստանի աշխարհագրական ու մշակութային քարտեզի հետ: Ըստ կատարողների՝ ներառում է բնակչության գրեթե բոլոր տարիքային խմբերը՝ գերակշիռ տեղ հատկացնելով միջին և ավագ սերնդին, հասարակ գյուղացուց մինչև ժողովրդապրոֆեսիոնալ կատարողներ, որոնք ֆոլկլորային ավանդույթի բուն կրող ու ստեղծող են:

Ամփոփելով՝ կարելի է եզրահանգել, որ աշխարհագրական տարածքը, մարդը, մշակութային միջավայրը, պատմական կենսընթացը՝

իրևև ամբողջական համակարգ, փոխակերպվել է մի օրգանական երաժշտախոսքային կառույցի՝ հիպերտեքստի, որից արհեստականորեն պոկված երգը կամ նվագը՝ անգամ առանձին ժանրը, համակողմանի քննության պարագային՝ անհնար է դիտարկել որպես օրգանապես այլ մշակութային տեքստի բաղկացուցիչ:

Հայսմ՝ այս ժառանգությունը գրավոր և հնչյունային տարբերակներով պահպանելով հանդերձ՝ գերակա նշանակություն ունի թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում նոտագիր ու ձայնագրյալ եղանակներով հանրահռչակելը, մասնագիտացված խմբերին ու ժողովրդական կատարողներին հասանելի դարձնելը: Ճանապարհ, որով այն կվերահաստատվի որպես արդի կենսընթացի երաժշտախոսքային բաղկացուցիչ և կշարունակվի՝ փոխակերպվելով նաև նոր ժանրերի ու ոճերի:

MUSICAL-VERBAL TEXT, EVERYDAY LIFE AND HISTORY (ACCORDING TO THE
PHONETIC COLLECTION OF THE INSTITUTE OF ARTS OF NAS RA)

Pikichian H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts,
Yerevan State University, Armenia)